թէ Այս մարդու վէտտէն լցած էր Համբարձմանս ա-
թոռակալութեան, և սայ զձեզ ձայնէր գալ և ոչ գա-
յիք. արդ զի՞նչ է արարմունք ձեր. և պատասխանե-
ցին թէ Ե՞ր ասացին նստէք, ե՞ր ասացին զբանս
իւրեանց առ մեզ եւ կամ թէ ի միատեղ տեսցուք.
Ե Զ տարի զինչ կամեցան իւրեանց գլխուն զայն ա-
բարին. Դ օր է զմօհրն չեմք կարեր ի ձեռանուն (առ-
նուլ), ո՞վ կ'ասէ թէ կու ձգէին դոքա։ Եւ չարքն այ-
նոքիկ սկսան խօսել, և ի միւս կողմանէ ամենեքեան
որք վիրաւորեալք էին ի նոցունց, առ այն տային
յերեսս նոցա մեծաւ աղաղակաւ։ Եւ սկսաւ Ղալֆան
ընդ փոքունս մեր որք կային թէ Ո՞վ ես դու որ եկեր
ես, և այլում թէ Զի՞նչ ես կանչեր պառաչեր. զի ոչ
գտաւ տեղի հանգուցանել զսիրտ իւր, և այլ ընդ մեզ
բազում ունէր։ Եւ լռեցուցին և ասեն. Մեք եկեալ
եմք ի ձէնջ մօհրն առնել զհինն, թէ լաւութեամբ և
վատութեամբ՝ կ'առնեմք։ Եւ նոքա ոչ կարացին զելս
պատասխան տալ։ Կրկին Ղալֆան թէ Գիտածնուդ մի՛
մնաք, մեք ձեզ մօհր չեմք տար։ Եւ չարքն ի բերա-
նոյ նորին առնելով զնոյն ասացին. և սկսան մերա-
յինք, արարին զնոսա մեծ վիրաւորեալս պէս պէս
գունիւք։ Զգուիմ զծրելն մեծ աղմկիս եղելոցս։
Դարձեալ եւ Առաջնորդն ի մէջ անկեալ հազիւ լռե-
ցոյց, մինչև յետ բանից յակամայ կամօք հաշտեցոյց
ընդ միմեանս թէ Սոքա ընդ ձեզ լիցին, բայց ոչ կար-
կատիւր։ Այլ առին զմօհր նոցա և կոտրեցին և վա-
րէին զգործակալութիւն եկեղեցոյն ուղղութեամբ եւ
միաբանութեամբ և Ղալֆան չէր գալման[1]) ի ժամ՝ և
Բ Դ չարքն, այլ ի խոր խոցի կային։

Ի Դշի աւուր (26 Մեպտ.) կեօրունուրտէ Եղիազար
վարդապետն եկն ի Սուրբ Նիկողոս և պարիշեցան ընդ
Մուղնեցուն։

1) գոլման.